ԿԱՐԵՒՈՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Մեր «Բազմավէպ Հանդիսարան»ը՝ սիրայօժար կը փոխանակենք՝ ազգային որ և է պարբերական թերթերու, լրագիրներու, և հայկական խնդիրներով և գրականութեամբ զբաղող օտարալեզու հրատարակութեանց հետ։

Կը խնդրենք մեր ազգային հեղինակներէն՝ որ հաճին մեր հասցէին ուղարկել՝ երկերկու օրինակ այն գրքերէն, որ 1900էն մինչև 1917ի շրջանին մէջ հրատարակուած են, թէ՝ հայալեզու և թէ՝ օտարալեզու, պայմանաւ որ վերջինս հայկական խնդիրներով զբաղի։ Մենք սիրայօժար կը փոխանակենք զանոնք՝ մեր Ցպարանին համարժէք որ և է գրքերու հետ՝ եթէ փափաքին ղրկողները. և նոյն իսկ Բազմավէպի մէջ՝ ղրկողներու անունով՝ ազդեր և ծանուցումներ կը հրատարակենք, այդ գրքերու մասին։

Մանաւանդ թէ՝ մեզի համար անհրաժեշտ և օգտակար Նպատակին համար, բանիմաց և ազգասէր անձերէն կը խնդրենք՝ որ բարեհաճին սոյնպիսի գրքերէն նուիրել մեր Միաբանութեան «Հայկական Գրադարանին», որ իւր ճոխութեամբը բաց է՝ որ և է ուսումնասէր և գրասէր անձերու առջև, որոնք ուրիշ տեղ չեն կրնար գտնել հայկական գրքերու կատարեալ հաւաքածոյ մը։ Անտարակոյս մեր պարտականութիւնը պիտի ըլլայ նուիրատուին և նուէրին անունները՝ շնորհակալութեամբ հրատարակել։

Բազմավէպի կանխիկ վճարող բաժանորդներէն կը խնդրենք իրենց որոշ հասցէները, որպէսզի զանոնք տպելով՝ այնպէս ղրկենք ծրարները։

Խմբագրութիւնս պատասխանատու չըլլար, երբ մեր ուղարկած թերթերը համբան կորսուին։ Պրակներն անկորուստ ստանալու համար, հարկ է յանձնարարելի բաժանորդագրուիլ, որուն համար պէտք է տարեկան գնոյն վրայ աւելցնել ½ ր. 3։

Բազմավէպի համար տասն հոգի բաժանորդ գտնողներուն՝ տարեկան Բազմավէպ մը նուէր կ'ընենք. և կամ մեր լիակատար գրացուցակի մէջէն 10 ֆրանքի արժողութեամբ խնդրուած գրքեր կը ծանենք։

Դարձեալ՝ միանուագ 100 ֆրանքէ աւելի արժողութեամբ մեր Ցպարանին գիրք ապսպրող անհատներու՝ տարեկան «Բազմավէպ»ի մը բաժանորդ կ'արձանագրենք։

Ամէն բաժանորդներու հասցէները տպագրուած և կպցուած պիտի ըլլան ղրկուելիք ծրարներու վրայ. իւրաքանչիւր բաժանորդ իր բաժանորդագրութեան կարգին համեմատ առաջնութեան սեպհական թիւը պիտի ունենայ՝ հասցէին վրայ տպուած. հետևաբար կը խնդրենք յարգելի բաժանորդներէն՝ որ ներփակ քարտը ամբողջացնելով՝ փութացնեն խմբագրութեանս հասցէին.

ԲԱԶՄԱՎԷՊԻ

ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Անանձնականներու	համար	ֆրանք	15, —	Տոլար	3, —	Ռուպլ	6, —
Գրավաճառներու	»	»	13, 50	»	2, 70	»	5, 30
Ուսուցիչ և ուսանողաց	»	»	10, —	»	2, —	»	4, —
Ազգային դպրոցներու	»	»	5, —	»	1, —	»	2, —
Որբանոցներու	»	»	2, 50	»	0, 50	»	1, —

digitised by A.R.A.R.@